

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
**(2025 թվական)**

Շրջակա միջավայրի նախարարություն						
NN	Նպատակ	Միջոցառումներ	2025 թվականի համար նախատեսված	Միջոցառումների իրականացման արդյունքները	Միջոցառումների չկատարման, այդ թվում՝ սահմանված ժամկետում, պատճառները	Ժանդթա գրություն
1	2	3	4	5	6	7
1.	1. Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի	1.2 Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և Կառավարության որոշման ընդունում	<p>Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանի մշակումը կնպաստի Հյուսիսային ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցմանը, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռմանը, որն իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ողջամիտ կառավարման, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը</p> <p>-Հյուսիսային ջրավազանային կառավարման պլանի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում և շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման գործընթացի իրականացում</p>	<p>ՇՄԱԳ գործընթացի շրջանակներում կազմակերպվել են հանրային լսումներ ազդակիր համայնքներում:</p> <p>Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի պլանի նախագծի վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 9-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության N178-24 դրական եզրակացություն:</p> <p>Հյուսիսային ջրավազանային</p>		<p>2021-2026թթ.</p> <p>2025թ. դեկտեմբերի 3-րդ</p>

	պահպանությունն ու կառավարումը.			կառավարման տարածքի պլանի նախագծի վերաբերյալ 2024 թվականի սեպտեմբերի 9-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության N178-24 դրական եզրակացություն:		
2		1.4 «Արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կառավարության որոշման ընդունում	Արտադրական կեղտաջրերի նախնական մաքրմանը ներկայացվող պահանջների առկայություն, որը կբարձրացնի կեղտաջրերի մաքրման մակարդակը, կնպաստի շրջակա միջավայրի, մասնավորապես՝ ջրային ռեսուրսների պահպանությանը, ինչպես նաև ջրահեռացման համակարգերի անվտանգ շահագործման ապահովմանը:	Ընդունվել է Կառավարության 2025 թվականի նոյեմբերի 14-ի N 1597-Ն որոշումը		<b>2025թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</b>
3		1.8 Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում	- Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի գույքագրման արդյունքների հիման վրա լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացման ժամանակացույցի սահմանում՝ ըստ առաջնահերթությունների - Ըստ ժամանակացույցի՝ 1-ին փուլով առաջնահերթ գնահատված Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում 2025թ.՝ Լուծարված և կոնսերվացված հորերի հանձնման-ընդունման գործընթացի ապահովում:	Լուծարվել և/կամ կոնսերվացվել է 33 խորքային հոր, ինչի արդյունքում խնայվել է տարեկան շուրջ 34.5 մլն խմ ջրաքանակ:		2024թ. դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ  <b>2025թ.</b>
4	2. Սևանա լճի էկոհամակարգայի	2.3 Սևանա լճի ավազանում	- Սևանա լճի ավազանում 6 ավտոմատ օդերևութաբանական			2023թ.

	<p>ն հավասարակշռության և կենսաբազմազանության պահպանումը, վերականգնումը, վերարտադրումը, բնականոն զարգացումն ու խելամիտ օգտագործումը.</p>	<p>հիդրոօդերևութաբանական և շրջակա միջավայրի մոնիթորինգի դիտարկումների համակարգի բարելավում և արդիականացում, ջրային ռեսուրսների կանխատեսումների որակի և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարելավում</p>	<p>կայանների ձեռքբերում և տեղադրում,</p> <p>- Ջրային մակերևույթից գոլորշացման ճշգրիտ գնահատման նպատակով Սևանա լճի ավազանում (ԳԳԻ-3000) գոլորշաչափերի տեղադրում,</p> <p>--Սևանա լճի ջրային հաշվեկշռի կազմում, բարելավում և հաշվեկշռի բաղադրիչների հուսալիության բարձրացում,</p> <p>- Սևանա լճի ավազանում շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի գործընթացում ժամանակակից սարքավորումներով և մեթոդներով հագեցվածության ապահովում, կարողությունների զարգացում</p>	<p>• ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող «Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման բարելավում» ծրագրի 1-ին՝ «Ջրային ոլորտի ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքների ներդրում» բաղադրիչի շրջանակներում արդիականացվել են Սևանա լճի ավազանի 2 հիդրոլոգիական դիտակետ՝ Արփա-Սևան-Ծովինար և Հրազդան ՀԷԿ-ի ուղղաթեք ջրանցք-Գեղամավան:</p> <p>• EU4Sevan ծրագրի շրջանակներում</p> <p>- ձեռք է բերվել «Միկրոստեպ-Միս» ընկերության մեկ ավտոմատ օդերևութաբանական կայան զինված ջրի և օդի ջերմաստիճանի, տեղումների քանակի, օդի խոնավության, քամու ուղղության և արագության, մթնոլորտային ճնշման, արեգակնային ռադիացիայի, ջրային մակերևույթից գոլորշացման տվիչներով, վերջինս տեղադրվել է Սևանա լճի առափնյա գոտում:</p> <p>- մոդելավորվել է Սևանա լճի ջրհավաք ավազանի ապագա ջրային հաշվեկշիռը: Գնահատվել է տեղումների քանակի, օդի ջերմաստիճանի, պոտենցիալ գոլորշունակության, գետային հոսքի</p>	<p>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p> <p>2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>	<p>նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>
--	---	--	---	---	--	---------------------------------

				<p>փոփոխությունները մինչև 2071-2100թթ. համար՝ 1981-2010թթ ռեֆերենս ժամանակահատվածի համեմատ, ըստ արտանետումների երկու սցենարի:</p> <p>- ձեռք բերված գերմանական OTT ապրանքանիշի ջրաչափական պտուտանները ներդրվել են Սևանա լիճ թափվող գետերի ջրաչափական աշխատանքներում բարելավելով գետային ներհոսքի հաշվարկման ճշտությունը:</p>		
5		2.5 «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի գործարկում	<p>Բարեկարգված, կահավորված և սպասարկվող հանրային լողափերի առկայություն՝ հանրության բոլոր շերտերին հասանելի հանգստի հնարավորության ապահովում</p>	<p>Կառավարության որոշմամբ հաստատված <u>12 հանրային լողափից</u> Սևանի քաղաքային <u>3 հանրային լողափ</u> բարեկարգվել է լրիվ նոր չափորոշիչներով, ներդրվել են «Էկոֆրենդլի» մոտեցումներ, այդ թվում՝ կեղտաջրերի մաքրման կայաններ, ստեղծվել են համապատասխան հարմարություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նույնատիպ մոտեցումներով գործակվել է ևս 3-ը:</p> <p><u>2025 թվականի դրությամբ առկա է գործող 6 հանրային լողափ:</u></p> <p>Նախկինում պատվիրակված 2 լողափի բարեկարգման և սպասարկման նպատակով կնքված պայմանագրերը լուծվել են՝ պայմանագրային պարտավորությունների չկատարման հիմքով:</p> <p><u>4 հանրային լողափի</u> համար բազմիցս հայտարարված մրցույթներում հայտեր չեն ներկայացվել:</p>	2024-2026թթ.	2025թ. հուլիսի 1-ին տանուջր ակ

6	<p>3. Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը.</p>	<p>3.2 Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում</p>	<p>Անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառապատման ու անտառվերականգնման աշխատանքների իրականացման համար որակյալ տնկանյութի ստացում:</p> <p>2025թ.՝ անտառմշակույթների հիմնում՝ 170հա</p> <p>-ջերմոցային տնտեսություններում փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում՝ շուրջ 1 մլն. հատ</p>	<p>- 2025 թվականին Հայանտառ ՊՈԱԿ-ի թվով 6 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում իրականացվել է 170հա անտառապատման աշխատանքներ, -90 հա վրա իրականացվել է բնական վերաճի օժանդակում հանքայնացման միջոցով և հարթակներով ցանքս,</p> <p>- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի և Սիսիանի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի ջերմատներում փակ արմատային համակարգով աճեցվել է 1 մլն սերմնաբուսակ՝ որից անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներում օգտագործվել է 588.642 հազար սերմնաբուսակ, իսկ 411.356 հազար սերմնաբուսակ դրվել է ձմեռման՝ հաջորդ տարի օգտագործելու նպատակով:</p> <p>Իրականացվել է 10650 կգ անտառային սերմի մթերում և որակավորում: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի թվով 4 «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում հիմնադրվել է 3,4 հա տնկարան:</p>		<p>2021-2026թ.թ.</p>
---	--	--	---	--	--	----------------------

7		<p>3.3 Անտառների կառավարման ոլորտում անտառպահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում</p>	<p>Ապօրինի անտառօգտագործման նվազում, կանխարգելում, անտառվերականգնման անտառապատման, ինչպես նաև անտառտնտեսվարման աշխատանքների արդյունավետության բարձրացում, միջազգային ստանդարտներին համապատասխան ջերմոցային համալիրների և սառնարանային տնտեսության հիմնում:</p> <p>Ըստ միջազգային դրամաշնորհային ծրագրով հաստատված ժամանակացույցի՝</p> <p>-անտառային ոլորտի նորագույն տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում «Պիկապ» տեսակի ամենագնացներ /14 հատ/, դրոններ /14 հատ/, GPS սարքեր /400 հատ/ և այլ սարքավորումներ, ծխի, ձայնի, ջերմության նկատմամբ զգայուն սարքեր /սենսորներ/ - 150 հատ, տեսանկարահանող սարքեր, դրանց սպասարկող սարքավորումներ /80 հատ/:</p> <p>-անտառային պտուղների և հատապտուղների հավաքագրման և վերամշակման կենտրոնների /2 հատ/, բրիկետների արտադրության կետի /1 հատ/ հիմնում:</p>	<p>Պետական բյուջեից հատկացված միջոցներով ձեռք են բերվել՝ 22(Սյունիքի մարզային վարչություն) տրանսպորտային միջոց (պիկապ), իսկ 55 (Տավուշի և Կոտայք Գեղարքունիք մարզային վարչություն) տրանսպորտային միջոցները (պիկապներ) գտնվում են մատակարարման փուլում, գործառնական 99 հատ ավտոմեքենաների կահավորման համար «mobile» համակարգ, 801 հատ համազգեստին ամրակցվող թվային տեսախցիկներ, 42 հատ համազգեստին ամրակցվող թվային տեսախցիկների լիցքավորիչ և հիշողության պահպանման սարք, 400 հատ ձեռքի դյուրակիր ռադիոկայան հավելյալ մարտկոցով և լիցքավորիչով, 100 հատ համակարգչային պլանշետ, 200 հատ ռետինե մահակ, 400 հատ ձեռնաշղթա, 995 հատ լրակազմ ծառայողական համազգեստ, 595 հատ տակտիկական գոտի, 230 հատ ծառայողական զենք, 5000 հատ փամփուշտ, 181 հատ կրծքանշան, 181 հատ կաշվեպանակ:</p> <p>Տավուշի մարզային վարչության շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքների ձեռք բերում թվով 5 հասցեների համար, ինչպես նաև հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական աշխատանքների</p>	2021-2026թթ.	2023-2026թթ.
---	--	---	--	---	--------------	--------------

				<p>ծեղք բերում թվով 2 հասցեների համար:</p> <p>Անհրաժեշտ գույքի մի մասը նախատեսվում է ծեղք բերել ՄԱԿ ՇՄԾ /ԳԷՀ «Հայաստանում հողերի վերականգնում և էկոհամակարգային ծառայությունների բարելավում պտղատու և ընկուզավոր ծառատեսակների կենսաբազմազանության օգտագործման միջոցով» ծրագրի շրջանակներում:</p> <p><i>Վերազինումը կրում է շարունակական բնույթ:</i></p>	
8	3.4 Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառպաթուղոգիական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում,	Առողջ անտառների առկայություն Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը քիմիական եղանակից կենսաբանական անցնելու համար նախադրյալների ստեղծում:	2025 թվականին շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վայոց ձորի, Արագածոտնի և Հրազդանի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառային տարածքներում անօդաչու թռչող սարքերի միջոցով իրականացվել են 9000 հա հիվանդությունների և վնասատուների դեմ կենսաբանական պայքարի միջոցառումներ:	2021-2026թթ.	
9	3.5 Անտառային կադաստրի վարում	Անտառների ազգային տեղեկատվական համակարգի աշխատանքի ապահովում՝ անտառների կադաստրի վարման համար անհրաժեշտ հենքի	Շրջակա միջավայրի նախարարության կողմից հայտարարվել է պայմանով մրցույթ DJI Matrice 4E տեսակի անօդաչու թռչող սարք ծեղք բերելու	2021-2026թթ.	

			ստեղծում	նպատակով, որի կիրառումը հնարավորություն կտար միջազգային ստանդարտներին համապատասխան ժամանակակից տեխնիկայի միջոցով իրականացնել անտառային պետական կադաստրի վարման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման, մշակման և համադրման աշխատանքներ:		
			- յուրաքանչյուր տարի անտառային կադաստրի վարում	Բյուջետային վերաբաշխման միջոցով անօդաչու սարք ձեռքբերելու նպատակով ներկայացվել է համապատասխան Կառավարության որոշման նախագիծ, որը սակայն հանվել է շրջանառությունից:		2023-2026թթ
10		3.6 Անտառների պետական հաշվառում  (անտառների ազգային գույքագրում և անտառների ազգային մոնիթորինգ)	Հանրապետության անտառների վերաբերյալ ամբողջական թարմացված տեղեկատվության առկայություն,  Յուրաքանչյուր տարի՝  330 հատ մշտական փորձահրապարակների տեղադրում	Անտառների ազգային գույքագրման նպատակով «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ում, «Կենսոլորտային համալիր » ՊՈԱԿ-ում և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Հրազդանի, Վանաձորի, Իջևանի, Սևքարի, Վայոց-Ձորի Արձվաբերդի, Տաշիրի, Զիլիգայի, Ստեփանավանի, Թումանյանի, Կապանի, Սյունիքի անտառտնտեսություն մասնաճյուղում և հարակից տարածքներում տեղադրվել են ընդհանուր թվով 330 մշտական փորձահրապարակներ որոնցից 207-ը անտառածածկ տարածքներում, 1-ջրային և 122-ը այլ հողերում, որոնց արդյունքները ներբեռնվել են տվյալների բազայում հետագա վերլուծությունների համար:		2025-2026թթ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ

11	<p>4. Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ռեժիմների և վերահսկողության մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, հարակից բնակավայրերի կարողությունների զարգացումը</p>	<p>4.1 Բնության հատուկ պահպանվող տարածքների քարտեզագրում և իրավունքների վերագրանցում</p>	<p>Հստակեցված և պետական գրանցման իրավունքով սահմանված բնության հատուկ պահպանվող 8 տարածքների ճշգրտված քարտեզների առկայություն</p>	<ul style="list-style-type: none"> <li>• <b>«Սևան» ազգային պարկի</b> մասով՝ 2025 թվականի տարեսկզբից մեկնարկել են Ազգային պարկի, հարակից 5 համայնքների (Ճամբարակ, Վարդենիս, Մարտունի,) և Գեղարքունիքի մարզպետարանի հետ սահմանային խնդիրների լուծման շուրջ աշխատանքային քննարկումները, որոնց ընթացքում համատեղ համաձայնեցված սահմանների հիման վրա իրականացվում են Ազգային պարկի հատակագծի փուլ առ փուլ վերջնականացման աշխատանքներ: Սահմանների ճշգրտման աշխատանքներն ավարտվել են, սակայն առկա են համայնքների հետ որոշ հողամասերի կարգավիճակի հետ կապված դեռևս չհամաձայնեցված հարցեր:</li> <li>• <b>«Շիկահող» պետական արգելոցի և «Սոսու պուրակ» պետական արգելավայրի</b> մասով՝ «Շիկահող» պետական արգելոցի և «Սոսու» պուրակ պետական արգելավայրի սահմանները քարտեզագրվել են, կազմվել է վերջիններիս սահմանների նկարագիրը և հատակագիծը: Մշակվել է վերոնշյալ երկու ՊՏ-ների հատակագծի և սահմանների նկարագիրը հաստատելու մասին Կառավարության որոշման նախագիծ:</li> <li>• <b>«Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի</b> մասով՝ «Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական</li> </ul>	<p>2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>
----	--	--	---	--	--

				<p>արգելավայրի սահմանները քարտեզագրվել են, կազմվել է վերջիններիս սահմանների նկարագիրը և հատակագիծը: Մշակվել է վերոնշյալ երկու ՊՏ-ների հատակագծի և սահմանների նկարագիրը հաստատելու մասին Կառավարության որոշման նախագիծ:</p> <p>• <b>«Ձանգեզուր», «Խուստուփ» և «Սև լիճ» արգելավայրերի</b> մասով՝ «Ձանգեզուր», «Խուստուփ» և «Սև լիճ» պետական արգելավայրերի կառավարման պլանների հիման վրա վերլուծվել, քարտեզագրվել և առաջարկվել են դրանց սահմանների փոփոխություններ, հաշվի առնելով վերջիններիս ներկայիս սահմաններից դուրս գտնվող հողերի նպատակային և գործառնական նշանակությունները: Քարտեզագրման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ներկայումս ընթացող «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում Հայաստանում» ծրագրի «Կենսաբազմազանություն և բնության հատուկ պահպանվող տարածքներ» բաղադրիչի շրջանակներում՝ դրամաշնորհային միջոցներով:</p>		
12		<p>4.2 Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակում և Կառավարության որոշումների ընդունում</p>	<p>Թվով 8 բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների առկայություն</p>	<p>–«Սևան» ազգային պարկի 2026-2030 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին»,  –«Արևիք» ազգային պարկի և «Բողաքար» պետական արգելավայրի 2026-2030 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին»,</p>		<p>2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ</p>

				<p>«Շիկահող» պետական արգելոց, «Զանգեզուր», «Խուստուփ», «Սոսու պուրակ», «Սև լիճ» պետական արգելավայրեր պահպանվող տարածքների 2026-2030 թվականների կառավարման պլանը հաստատելու մասին»</p> <p>Կառավարության որոշման նախագծերը ներկայացվել են Կառավարության քննարկմանը: Վարչապետի աշխատակազմից ստացված դիտողությունների հիման վրա որոշման նախագծերը գտնվում են լրամշակման փուլում:</p>		
13	<p>5 .Կենսաբազմազանության պահպանությունը և կենսաանվտանգության ապահովումը, կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների հաշվառումը.</p>	<p>5.2 «Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում:</p>	<p>Միջազգային պահանջներին և ԵՄ դիրեկտիվների հետ համահունչ օրենքի առկայություն ՀՀ բուսական աշխարհի արդյունագործական, գյուղատնտեսական, գիտահետազոտական, կրթական, բնապահպանական և սոցիալական նպատակներով, այդ թվում նաև ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների օգտագործման գործընթացի կանոնակարգում և վարչարարության նվազեցում:</p>	<p>Օրենքի նախագիծը 13.05.2025թ. ներկայացվել է Կառավարության քննարկմանը, որը վերադարձվել է Վարչապետի 2023 թվականի հունվարի 31-ի N0211 հանձնարարականի (գաղտնի) կատարումն ապահովելու պահանջով, ինչի կատարման շրջանակներում աշխատանքներ են տարվել ս.թ. ապրիլի 18-ից: Հանձնարարականի պահանջը հնարավոր է եղել ապահովել 2025 թվականի հոկտեմբերի 22-ին: Քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկների հիման վրա լրամշակված Օրենքի նախագիծը 2025թվականի դեկտեմբերի 8-ին վերստին ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:</p>	<p>2025 թ. ապրիլի 1-ին տասնօրյակ</p>	
14		<p>5.3 Բուսական և կենդանական աշխարհի օբյեկտների</p>	<p>Յուրաքանչյուր տարի</p> <p>-Բուսական և կենդանական աշխարհի տեսակային կազմի, տարածվածության, վիճակի,</p>	<p>Կենդանական աշխարհի պետական հաշվառման նպատակով</p> <p>-KfW-ի «Կենսաբազմազանություն և կայուն տեղական զարգացում</p>	<p>2025-2026 թթ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ</p>	

		հաշվառում	<p>պաշարների վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության հավաքագրում</p> <p>-տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:</p>	<p>Հայաստանում» ծրագրում ներառվել է կենդանական և բուսական աշխարհի առանձին խմբերի հաշվառման աշխատանքների իրականացման միջոցառումը, որի աշխատանքները ընթացքում են:</p> <p>-Կենսաբազմազանության մոնիթորինգի կազմակերպման շրջանակներում իրականացվել է կարմիրգրքյան, IUCN և ինդիկատոր տեսակների վերաբերյալ տվյալների հավաքագրում, քարտեզագրում և էլեկտրոնային բազայի ստեղծում:</p> <p><i>Աշխատանքները կրում են շարունակական բնույթ:</i></p>	ակ
15		5.4 ՀՀ տարածքում հանդիպող սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների, Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների գնահատում	<p>Յուրաքանչյուր տարի՝</p> <p>- սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների, Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների տեղեկատվության առկայություն,</p> <p>-արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում,</p> <p>-տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:</p>	<p>Իրականացվել է՝</p> <p>- որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների հաշվառում,</p> <p>- Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում:</p> <p>Այդ արդյունքների հիման վրա մշակվել և հաստատվել են սոցիալական և արդյունագործական որսի թույլատրելի չափաքանակները և ժամկետները:</p>	2022-2026թթ.
16		5.6 «Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն	<p>Հարկային օրենսգրքով սահմանված կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների օգտագործման համար սահմանված բնօգտագործման վճարի դրույքաչափերի</p>	<p>2025 թվականի հունվարի 9-ին Կառավարության կողմից ընդունվել է «Հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու</p>	2025թ. մարտի 3-րդ տասնօրյակ

		արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում	վերանայում	մասին» կառավարության N 25-Ա որոշումը:  (Օրենքը ԱԺ կողմից ընդունվել է 2025 թվականի ապրիլի 18-ին):		
17	6. Կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության և մեղմման գործողությունների իրականացումը.	6.2 «Կլիմայի փոփոխության մասին» Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2026-2035 թվականների Ազգային մակարդակով սահմանված հանձնառությունները » հաստատելու մասին» Կառավարության որոշման ընդունում	Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության ստանձնած հանձնառության պատշաճ իրականացում՝ ձևավորելով մինչև 2035 թվականը ջերմոցային գազերի արտանետումների կրճատման թիրախ ողջ տնտեսության համար	Ընդունվել է Կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N1962-Լ որոշումը:		2025թ. նոյեմբերի 2-րդ տասնօրյակ
18		6.4 «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցում	-Ձևավորել ազգային թափանցիկության պահանջների (Չափողականության, Հաշվետվողականության և Հավաստագրման/ՉՀՀ) շրջանակի ինստիտուցիոնալ պայմանավորվածություններ,  -Ստեղծել առցանց հարթակ՝ տվյալների և ազգային հաշվետվությունների հասանելիությունը ապահովելու համար,  -Մշակել մեղմման քաղաքականությունների և գործողությունների, ինչպես նաև դրանց ազդեցության գնահատման և	Առցանց հարթակում տեղեկատվություն ներբեռնելու համար մշակվել և հաստատվել են՝ - 2024 թվականի հունվարի 11-ի «Ջերմոցային գազերի գույքագրման կարգը հաստատելու մասին» Կառավարության 54-Ն որոշումը՝ <a href="https://www.arlis.am/hy/acts/188713_">https://www.arlis.am/hy/acts/188713_</a> , - 2024 թվականի հունիսի 7-ի «Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության ստացած կլիմայական ֆինանսավորման վերաբերյալ տեղեկատվության		2025թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

			<p>հաշվետվողականության համար ոլորտային ձևաչափեր և ուղեցույցներ,</p> <p>- Մշակել հարմարվողականության գործողությունների, քաղաքականությունների և դրանց ազդեցության հավաքագրման մեթոդաբանություն,</p> <p>- Մշակել միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից ստացված աջակցության վերաբերյալ հաշվետվողականության մեթոդաբանություն,</p> <p>- ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի ներքո Երկամյա թափանցիկության զեկույցների՝ ներառյալ ջերմոցային գազերի կադաստրների կազմում</p>	<p>ներկայացման ձևը, լրացման կարգը, տեղեկատվության հավաքագրման և հաշվետվողականության մեթոդաբանությունը, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործողությունների ըստ ոլորտների դասակարգման ուղեցույցը հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի N 202- L հրամանը՝ <a href="http://env.am/storage/files/202-l.pdf">http://env.am/storage/files/202-l.pdf</a>,</p> <p>- 2025 թվականի սեպտեմբերի 18-ի «Ջերմոցային գազերի արտանետումների մեղմման քաղաքականության և միջոցառումների տեղեկատվության հավաքագրման, չափման, մշտադիտարկման, գնահատման և հաշվետվողականության ուղեցույցը և տվյալների հավաքագրման ձեվաչափը 2024-2025 թվականների համար և առաջնային տվյալների հավաքագրման ձեվանմուշները և առաջնային տվյալների, ամփոփ տվյալների որակի ստուգման և տվյալների որակի ապահովման ստուգաթերթերը հաստատելու մասին» շրջակա միջավայրի նախարարի N360-L հրամանը՝ <a href="http://env.am/storage/files/hraman360.pdf">http://env.am/storage/files/hraman360.pdf</a>,</p> <p>- Գյուղատնտեսության և ջրային ռեսուրսների ոլորտներում կլիմայի փոփոխության հարմարվողականության մշտադիտարկման և գնահատման համակարգը և ցուցիչների կիրառման տեխնիկական ու</p>	
--	--	--	---	--	--

				<p>ստանդարտ գործառնական ընթացակարգերը, - Առցանց հարթակը մշակված է և տեղայնացման փուլում է ամպային տիրույթում:</p>	
19		<p>6.7 «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքների կառավարում» բաղադրիչի իրականացում</p>	<p>Շենքերի էներգաարդյունավետության բարձրացում</p> <p><b>2024թ. և 2025թ.</b> յուրաքանչյուր տարի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>- էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի (ԷԿՏՀ) համակարգչային ծրագրի տեղայնացում և տվյալների ավելացում</li> <li>- ԷԿՏՀ տվյալների ավտոմատ ստացման համար սարքավորումների, «խելացի հաշվիչների» և կապի միջոցների ձեռքբերում:</li> <li>- Երևան համայնքի հասարակական շենքերի տվյալների հավաքագրում ու վերլուծում:</li> <li>- Mershenq.am վեբ-կայքի արդիականացում, տվյալների թարմացում:</li> <li>- Գովազդային նյութերի պատրաստում և տարածում:</li> <li>- ջերմաարդիականացված շենքերի էներգետիկ աուդիտների իրականացում և էներգետիկ անձնագրերի կազմում:</li> <li>- ջերմաարդիականացված շենքերից ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների իրականացում և գնահատում:</li> </ul>	<p>2025 թվականին նախատեսված աշխատանքներն ամբողջովին ավարտված են, մասնավորապես՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. Երևան համայնքի հասարակական 347, Ստեփանավան համայնքի 19 և Ալավերդի համայնքի 73 հասարակական շենքերի ցուցանիշների էներգետիկ ցուցանիշների հավաքագրման և էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգ (ԷԿՏՀ) մուտքագրման աշխատանքները:</li> <li>2. Ջերմաարդիականացված 124 շենքերի համար էներգետիկ աուդիտների իրականացման և էներգետիկ անձնագրերի կազմման աշխատանքները:</li> <li>3. Նշված 124 շենքերի համար ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկների և գնահատման աշխատանքները:</li> <li>4. «Համայնքներում էներգիետիկ կառավարման համակարգի գործարկում», «էներգիետիկ կառավարման համակարգի և էներգետիկ կառավարիչների ինստիտուտի ներդնումը ՀՀ համայնքներում» և «էներգիետիկ կառավարման համակարգի գործնական աշխատանքներ» թեմաներով դասընթացների կազմակերպման աշխատանքները:</li> <li>5. Էներգաարդյունավետության և էներգախնակողության վերաբերյալ պատրաստվել է մեկ անիմացիա և 3</li> </ol>	<p><b>2024-2026թթ., հունիսի 3-րդ տասնօրյակ 2025թ.</b></p>

				<p>տեսանյութ:</p> <p>6. Ջերմաարդիականացված շենքերի վերաբերյալ 2 քուիզների (ստուգիչ հարցաշար) պատրաստման աշխատանքները:</p> <p>7. Mershenq.am վեբ-կայքում 224 ջերմաարդիականացումն ավարտված և 51 ընթացքի մեջ գտնվող շենքերի տվյալների մուտքագրման աշխատանքները:</p> <p>8. Համաձայն մշակված ձևաչափի, Excel աղյուսակում, ներբեռնվել են վերանորոգված շենքերի վերաբերյալ տվյալները:</p> <p>9. Իրականացվել է Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի ջերմոցային գազերի ցանցային արտանետումների ստանդարտացված գործակցի հաշվարկ՝ 2022-2024թթ. համար:</p>		
20	6.8 «Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում» ծրագրի իրականացում	Ցածր ածխածնի շարժունակության ինստիտուցիոնալացում և ռազմավարական պլանավորում,	2025թ.՝	2025 թվականին նախատեսված աշխատանքներն ամբողջովին կատարված են, մասնավորապես՝	2021-2024թ.թ.	
		1. Ծրագրի համաֆինանսավորմամբ գնված 28 հատ էլեկտրական շարժիչով մեքենաների օգտագործման մոնիթորինգի իրականացում և արդյունավետության գնահատում:	2. Էլեկտրական շարժիչով մեքենաների օգտագործման արդյունավետության վերաբերյալ առաջարկությունների մշակում			1. Մշակվել և Կառավարություն է ներկայացվել «Էլեկտրական շարժունակության զարգացման ազգային ռազմավարություն» փաստաթուղթը:
		2. Էլեկտրական շարժիչով մեքենաների օգտագործման արդյունավետության վերաբերյալ առաջարկությունների մշակում	3. Միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպման և էլեկտրական շարժունակության ազգային	2. Իրականացվել է ծրագրի համաֆինանսավորմամբ գնված 28 էլեկտրական մեքենաների ֆինանսական, բնապահպանական և սոցիալտնտեսական մոնիթորինգ:		
			3. Միջգերատեսչական աշխատանքային խմբի հանդիպման և էլեկտրական շարժունակության ազգային	3. Իրականացվել է ծրագրի շրջանակում տեղադրված 30 լիցքավորման կայանների ֆինանսական, բնապահպանական և սոցիալտնտեսական մոնիթորինգ:		
				4. Մշակվել են առաջարկություններ		

			Ֆորումի կազմակերպում:	Էլեկտրական շարժիչով մեքենաների օգտագործման արդյունավետության վերաբեյալ, ինչը ներառվել է քաղաքականության համապարփակ փաստաթղթի մեջ: 5. Կազմակերպվել է էլեկտրական շարժունակության ֆորում:		
21	6.9 «Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում՝ կլիմայի փոփոխության մեղմման միջոցով» ծրագրի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և հարմարվողականություն՝ նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչի իրականացում	2021-2029թ.թ. ծրագրի իրականացման շրջանակներում կլիմայի փոփոխության մեղմացում և հարմարեցում անտառային ներդրումների և տեխնոլոգիաների փոխանցման միջոցով	2025 թվականին իրականացվել է՝ 1. 178 հա անտառվերականգնված տարածքներում տնկարքերի խնամքի աշխատանքներ: Պայմանագիր է կնքվել «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ 559,0 հա անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքների իրականացման նպատակով՝ իրականացվել է 474,8 հա անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքներ: Անտառտնկման և անտառվերականգնման նպատակով կատարվել է նախագծային և տեխնիկական աշխատանքների ամբողջական ճշգրտում: Աշխատանքները դադարեցվել են ՄԱԿ-ի ՊԳԿ մասնագետների պահանջով այն հիմնավորմամբ, որ տնկման տարածքներում հողի վերին շերտի սառցակալումը անբարենպաստ է տնկման աշխատանքների իրականացման համար՝ 84,2 հա տնկման աշխատանքները կիրականացվեն 2026 թվականի գարնանը: 2. Կազմակերպվել են սերմնահավաքի ու սերմերի կառավարման թեմաներով ուսուցումներ՝ ուղղված «Հայանտառ»		2021-2026թթ.	
		Յուրաքանչյուր տարի՝ 1. 700հա անտառտնկման և տնկարքերի խնամքի աշխատանքների իրականացում, 2. Շահագրգիռ կողմերի համար դասընթացի կազմակերպում:			2024թ.-2026թ.	

				ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի աշխատակիցների և ներգրավված համայնքային մասնագետների կարողությունների զարգացմանը:		
22	6.10 «Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից Հայեցակարգի ընդունում	2025 թվականին նախատեսված աշխատանքներն ամբողջովին կատարված են, մասնավորապես՝ 1. Ծրագրային հայեցակարգի նախագիծը քննարկվել և դրական է գնահատվել ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ կլիմայի հիմնադրամի (ԿԿՀ) կողմից:		2022-2026թթ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ	
		Ծրագրի մեկնարկից հետո՝ ըստ ժամանակացույցի. 1. Հողի օրգանական ածխածնի կուտակման հատկությունների մեծացում, 2. Կլիմայի փոփոխության նկատմամբ լանդշաֆտների և էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում, 3. Կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրում, 4. Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցում, 5. Արդյունքների պահպանության և շարունակականության ապահովում	2. Ծրագրային հայեցակարգի նախագծի լրամշակումն ընդգրկվել է ԿԿՀ-ի կողմից ֆինանսավորվող «Պատրաստվածության աջակցություն» դրամաշնորհային ծրագրում: Համապատասխան փորձագետների կողմից նախագիծը կհամապատասխանեցվի ԿԿՀ-ի պահանջներին: 4. Նախատեսված աշխատանքների ծրագրային առաջարկը կներկայացվի ԿԿՀ-ի խորհրդի հաստատմանը 2026 թվականին:			2023-2026թթ.
23	6.11 «Կլիմայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Կառավարության հավանությանն	Օրենքի ընդունմամբ սահմանվելու է երկրում կլիմայական քաղաքականության մշակման ու իրականացման իրավական և ինստիտուցիոնալ շրջանակ, մասնավորապես՝	Ընդունվել է Կառավարության 2025 թվականի օգոստոսի 21-ի «ՀՀ կառավարության որոշումը «Կլիմայի մասին» օրենքի նախագծի և հարակից նախագծերի փաթեթի վերաբերյալ» օրենքների		2025թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ	

		արժանանալու վերաբերյալ Կառավարության որոշման ընդունում	կլիմայական նպատակների հստակ սահմանում և կլիմայական նկատառումների ներկառուցում ոլորտային զարգացման քաղաքականություններում, հրավասությունների և պարտականությունների սահմանում, նորարարական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, ջերմոցային գազերի արտանետումների, ստացված աջակցության և քաղաքականության հրականացման արդյունքների հաշվառման ինստիտուցիոնալ համակարգ:	նախագծերին հավանություն տալու մասին» N1168-Ա որոշումը  (Օրենքների նախագծերը 2025 թվականի նոյեմբերի 11-ին ընդունվել է ԱԺ կողմից առաջին ընթերցմամբ:)		
24	7. Քիմիական նյութերի էկոլոգիապես անվտանգ կառավարման համակարգի ստեղծումը.	7.3 Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի ձևավորում	Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում օգտագործվող քիմիական նյութերի և խառնուրդների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և «Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ռեեստրի» ձևավորման նպատակով նախապատրաստական աշխատանքներ:	Հավաքագրվել և մշակվել է 2015-2024 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծված ԱՏԳ ԱԱ 28 (անօրգանական քիմիական նյութեր. թանկարժեք մետաղներ, հազվագյուտ հողային մետաղներ, ռադիոակտիվ տարրերի կամ իզոտոպների անօրգանական կամ օրգանական միացություններ) և ԱՏԳ ԱԱ 29 (օրգանական քիմիական միացություններ) խմբերին դասվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվությունը (մոտ 36607 անուն նյութ)՝ ըստ պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական բազայում առկա տվյալների (ըստ ապրանքների հայտարարագրերի և Կառավարության 2018 թվականի հունիսի 28-ի N737-Ն որոշման համաձայն ներկայացված վիճակագրական ձևի) և ս.թ.		2021-2026թթ.  <b>2025թ. օգոստոսի 3-րդ տասնօրյակ</b>

				օգոստոսի 28-ի N1/09.1/9754 գրությանը ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:		
25	10. Հողերի աղտոտման և դեգրադացման կանխարգելմանն ու նվազմանն ուղղված քաղաքականության մշակումը և իրականացումը.	10.1 Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում	<p>- ՀՀ տարածքին համարժեք, միջազգային չափանիշներով արդյունավետ գործող և նպատակային ինֆորմացիա արտադրող մոնիթորինգային համակարգի առկայություն,</p> <p>- ՀՀ բնակլիմայական պայմաններին և հողային շերտի աղտոտվածության որակական բաշխման առանձնահատկություններին համապատասխան քարտեզների առկայություն</p> <p>Ուսումնասիրության ենթակա օբյեկտի/ մոնիթորինգային հարթակի առկայություն – 8</p>	ՀՀ տարածքում իրականացվել է հանքարդյունաբերական գործունեության հետևանքով աղտոտված և դեգրադացված հողերի մոնիթորինգ՝ դաշտային չափումների միջոցով, ծանր մետաղների և մի շարք քիմիական տարրերի պարունակության որոշման նպատակով: Հետազոտություններն իրականացվել են Լոռու մարզի Հազվիի ընդերքօգտագործման թափոնների լքված արտադրական լցակույտի տեղամասի, Նազիկի և Գեղարքունիքի մարզի Սոթքի փակված պոչամբարների տարածքներում: Կատարված հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա նշված տարածքներում առանձնացվել են 8 մոնիթորինգի հարթակներ:	2022-2026թթ	2025թ. դեկտեմբերի 3-րդ
26	11. Մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության մշակումը՝ ուղղված արտանետումների նվազեցմանն ու սահմանափակմանը.	11.2 Վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (շարժական և անշարժ աղբյուրներ) միասնական հաշվառման համակարգի ստեղծման համար նախադրյալների	Արտանետումների հաշվառման գործընթացի նախադրյալների ստեղծում	Իրականացված հետևյալ գործողություններով ստեղծվել են նախադրյալներ վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (շարժական և անշարժ աղբյուրներ) միասնական հաշվառման համակարգի ստեղծման համար՝ - Կառավարության 2024 թվականի հունվարի 11-ի N54-Ն որոշմամբ սահմանվել են ջերմոցային գազերի	2025թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	

